ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր եւ արտաքին կապերի բաժին
N 1913 01 MAR 2018 10:00
Կից ☐ Գրաֆ. կարգավիճակ
Նշումներ

«28» փետրվար 2018 թ No 528 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 25-ի N 347 որոշման 18-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0103025718 առ 23.02.2018թ. գրությունը և դեղի պարզ ընթացակարգով կատարված փորձագիտական եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Գրանցել երաշխավորված թվով 5 դեղերը՝ համաձայն հավելվածի:

2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ. Թոփչյանին՝

1) հնգօրյա ժամկետում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն.

2) սահմանված ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին՝ որպես հավաստագրի ուժի մեջ մտնելու ժամկետ նշելով սույն հրամանի տրման օրը.

4) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում պետական գրանցում ստացած դեղերի ցանկը:

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

Ա.Ա. 01.03.18 մ. 09 00

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
2018 թվականի փետրվարի 28 - ի
N 528 – Ա հրամանի

Պարզ ընթացակարգով կատարված փոխաքննության եզրակացության հավելված

h/h	Առևտրային անվանումը	միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները	դեղաձևը	դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը)	արտադրող ֆիրման	արտադրող երկիրը	գրանցման հավաստագրի իրավատերը	բացթողման կարգը	եզրակացության համարը և ամսաթիվը
1.	Թիոկտացիդ 600 S	թիոկտաթթու	լուծույթ ներարկման	25մգ/մլ; (5) ամպուլներ 24մլ	ՄԵԴԱ Ֆարմա ԳմբՀ & Քո. ԿԳ, Բենզշտրասե 1, 61352 Բադ Հոմբուրգ՝ բացթողնման հսկող, Համելն Ֆարմասյուտիկալս ԳմբՀ, Լանգես Ֆելդ 13, 31789 Համելն,	Գերմանիա	ՄԵԴԱ Ֆարմա ԳմբՀ & Քո. ԿԳ, Բենզշտրասե 1, 61352 Բադ Հոմբուրգ, Գերմանիա	Դ	17477 21.02.2018

					Գերմանիա՝ դեղաձևն արտադրող, փաթեթավորող՝				
2.	Ֆերվեքս	պարացետամոլ, ասկորբինաթթու, ֆենիրամին (ֆենիրամինի մալեատ)	դեղափոշի ներքին ընդունման լուծույթի կիտրոնի համով և շաքարով	500մգ+200մգ+25 մգ; (8) փաթեթիկներ 13,1գ	ՈՒՊՍԱ ՍԱՍ, 979, ավենյու դե Պիրենե, 47520 Լե Պասաժ	Ֆրանսիա	ՈՒՊՍԱ ՍԱՍ, 3, ռուե Ջոզեֆ Մոնիե-92500 Ռուել-Մալմեզոն, Ֆրանսիա	ԱԴ	17478 21.02.2018

3.	Ֆերվեքս	պարացետամոլ, ասկորբինաթթու, ֆենիրամին (ֆենիրամինի մալեատ)	դեղափոշի ներքին ընդունման լուծույթի, ազնվամորու համով և շաքարով	500մգ+200մգ+25մգ; (8) փաթեթիկներ 12,75գ	ՈՒՊՍԱ ՍԱՍ, 979, ավենյու դե Պիրենե, 47520 Լե Պասաժ	Ֆրանսիա	ՈՒՊՍԱ ՍԱՍ, 3, ռուե Ջոզեֆ Մոնիե- 92500 Ռուել- Մալմեզոն, Ֆրանսիա	ԱԴ	17479 21.02.2018
4.	Բիսոպրոլոլ	բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ)	դեղահատեր թաղանթապատ	5մգ; (30/3x10/) բլիստերում	Արփիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, տուն 19	Հայաստանի Հանրապետություն	Արփիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, տուն 19, Հայաստանի Հանրապետություն	Դ	17480 21.02.2018

5.	Վիշնեվսկու հեղուկաքսուք	կեչու խեժ, քսերոֆորմ	հեղուկաք սուք	30մգ/գ+30մգ/գ; 25գ ալյումինե պարկուճ	ԷՍԿՈ-ՖԱՐՄ ՍՊԸ, Նոր Նորք 5-րդ զանգվածՄիկոյան 13, Երևան 0079	Հայաստանի Հանրապետություն	ԷՍԿՈ-ՖԱՐՄ ՍՊԸ, Նոր Նորք 5-րդ զանգված, Միկոյան 13, Երևան 0079, Հայաստանի Հանրապետություն	ԱԴ	17481 21.02.2018